11 հուլիսի 2024թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Լեյկո ՍՊԸ-ի
տնօրեն՝ Գ. Ալեքսանյանին

Հարգելի Գ. Ալեքսանյան

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և Լեյկո ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024թ.-ի ապրիլի 26-ին կնքված **ԵԲԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/11-8** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչ օրս մատակարարում չի կատարել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ն հարկադրված է 2024թ.-ի հուլիսի 12-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 43200 (քառասուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամի և 28800 (քսանութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ , Հ/Հ 220300126152000)**,

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն Լեյկո ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ -ի

Տնօրեն **Հովիկ Բալյան**